Սայաթ Նովա

Մազիր ունին դաստառեհան

Էս Արութինի ասած է, իլլահի.

Մազիր անիս դաստառեհան՝ նման սիրուն սուսանի.
Ունքիրըդ ղալամով քաշած, սազում ին միր գումանին.
Թեթերուկըդ նիտ ու նաշտար՝ դիբչում է միր քամանին,
Աճկիրըդ օսկե փիայա, կրակ դրից միր ջանին:
Վարթ էրեսիդ խալ իս դրի՝ աստղի նման հավասար.
Գունքըդ Հնդստանի մում է, ջանս արավ ղավար-ղավար,
Լիզուդ քաղցր, բառըդ քաղցր, ակըռքնիրըդ անգին քար.
Պըռոշեմեդ միղր է կաթում, չի հասնում միր փինջանին:

Էրեսըդ է արիվ-լուսին, վիզդ է նման ղարղարի.
Բուխարնիրըդ կախ ին նընգի՝ ինձ ամա չիս դարդ արի.
Կուրըդ շիշմատ, մատնիրըդ՝ մում, ղանգըդ արավ ինձ սարսարի.
Գիշեր-ցերեկ էշխի մեչը կախվիլ է միր դամանին:

Էնդու համա ջունուն դառած կանչում իմ ամա՛ն-ամա՛ն,
Աճիլ է, ծաղկիլ է ծուցըդ, հուտը գու քա աննման.
Դոշըդ դառած (բաղ ու բաղչա), խալ է գցի շամաման.
Կու բխեցնե կաթնեախպուր, կանաչ չայիր չիմանին:

Թա՛րիփ արա, Սա՝յաթ-Նովա, գոգալը աննման է,
Մեճկը հադիդեմեն քաշած՝ մարթու հոքի կու հանե.

Ի՞նչ իս անում, ղանլու մարալ, էշխըդ ինձ կու սըպանե.
Մի սըպանի հասրաթեմեդ, յիկ, տեր մի դառ միր արնին: